սովորութեան իւրում եւ յաջողութեամբ[1] Քրիստոսի շնորհացն կարգեալ եւ հաստատեալ կշռէր:

23 Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց, յիշխանաց[2] աշխարհին եւ յամենայն եկեղեցեաց[3]. առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն, որոց[4] առաջնոյն Ենովք անուն էր[5], եւ երկրորդին Դանան, արք կրաւնաւորք եւ յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեանն. զորս յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ անդէն զետեղէր: *24* Եւ ինքն բազում աշակերտաւք գայր, անցանէր ի կողմանս[6] Հայոց Մեծաց եւ հասեալ ի Նոր Քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին, եւ ամենայն բանակին: *25* Եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց շնորհացն Աստուծոյ, դադարէր անդ աւուրս ինչ, մխիթարէր[7] վասն հոգեւոր անձուկն սփռելոյ:

[ԺԸ]

1 Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից: *2* Եւ երթեալ իջանէր յաշխարհն եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն[8] Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր, որում Արսվաղ[9] էր[10] անուն, ամենայն ազատաւք հանդերձ. որոց[11] առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի: *3* Ապա հարցեալ ի նոցանէ[12], առաջի եդեալ վասն որոյ եկեալն էր: *4* Եւ նոցա երկոցունց զուգակցելոց[13], եպիսկոպոսին եւ թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային եւս հրաման՝ ի գաւառաց եւ ի տեղեաց[14] իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց[15] յարուեստ դպրու-

1 *b* յակողութեամբ
2 *bcd* եւ իշխանաց
3 *b* եկեղեցայց
4 *c* որոյ / *միւսն.* որ *ուղղ.* որոց
5 *b* անուանէր
6 *bc* կողմանց
7 *b* մխիթարեալ
8 *d չիք* անուն
9 *de* Արսվաղէ
10 *de չիք* էր
11 *b* յորոյ / *c* որոց / *միւսն.* որոյ
12 *b* ի նոցանէն
13 *բոլորը*՝ զուգացելոց *ուղղ.* զուգակցելոց
14 *b* տեղաց
15 *bc* մանկանցն